



141. ՊԵՏԼ ՈՒ ԽԸՆԸԼՈՒՆՔ ԱԽՊԵՐԱՋԸ

էրկու ախպեր ըն ինում՝ մըեծը խելումք, կումուրը՝ պըել: Էտ մըեծ ախպերը կումուրեն միշտ պինըըլնելիս ա ինում, ուրան փայ պենն էլ ար տըրան անել տամ:

Մին օր մըեծ ախպերը կյամ ա տոն, կումուրեն թա՝ էքյուն վըխնըրնեն ան էծերը տըննական ըս պահես:

Կումուր ախպերը էքյուն վըխնըրնեն ան էծերը առաջն ա անում, տանում, վըեր պահես: Շատ ա տանում, թա խրեզյ, մին տանձի ժառ ա պըտահում: Եր ա ինում, վըեր թափի, վըխնըրնեն ան էծերը օտենն: Սառը համ թափում ա, համ իծերան ան վըխնըրներեն ասում:—Հու վըեր ինձետե տանձ չպահե, մուրթըլական ըմ: Թըփելիս տանձը լոխ օտում ըն (էծերն ան վըխնըրնեն), մենակ մին շաթլակ տանձ ինպյում ա մըեծ դոչին կեռ պողավը: Տա փըռնոտում ա վըխնըրնեն ան էծերը լոխ մուրթոտում, մենակ էտ դոչը պահում: Մըեծ ախպըերը կյամ ա, տեսնում սուրձնվեն սոնցը տուլած:

Էքյուն մըեծ ախպերը քյինամ ա, վըեր ծըմական տանձ հըվաքե, կումուրեն ասում ա.—Վըեր տուս կյաս հըյաթեն-պենին եշիս, տոռնը կըպահես, վըեր օրիշ մարթ նի չի մընենե: Տա մըեծ ախպորն ասածը թարս ա ըսկանում, տոռնը կուրընգինան ա անում պուկում, պահում: Շատ վըեր կենում ա, տեսնում ա, վըեր

մըեծ ախպերը լըտանում ա, տոռնը շիլակում ա, քյինամ մըեծ ախպորը քըթենում: Մըեծ ախպերն էլ իրեսեն մըխըրե խոսում ա, տընսնում, վըեր ըսելով պեն չի տուա կըլամկան, սուս ա անում:

Էտ վախտը դըլըզնեն կյամ ըն տեղավ անց կենում: Տահանը կյողը կընալի օրիշ տեղ լըն քըթենում, եր ըն ինում մին պեցուր, տընզըրե ծառ Մըեծ ախպերը կումուրեն ասում ա.—Տոռնը վըեր քցի, տա խոսկը ընջուկին քամակն ա քըցում, տոռնը շիլակած եր ինում ծառը: Էտ դըլըզնեն էլ թարսուն մնան կյամ ըն ծառեն տակեն վըեր կյամ, սուփրան քըցում, հաց օտում: Կումուր ախպըրը մըեծեն ասում ա.—Մեռքըս նըզացալ ա, տոռնը վըեր ըմ քըցում: Մըեծը թա՝ վըեր վըեր քըցիս, կյիլական ըն մըեզ ըսպանեն: Կումուրը անջուկ չի օնում, տոռնը թրումփալի վըեր ա քըցում թուշ տահանց սուփրեն յիրա: Հըլըզնեն վըխըլներան սըրտաճանք ըն ինում, ամեն հինչ թողում, փախում:

Էրկու ախպերը վըեր ըն կյամ, ըսկըսում տահանց թողած տես-տենը հըվաքելը: Մըեծ ախպերը փոզն ու վըեսկեն ա հըվաքում, կումուրը շորերն ան յուրդընդժշակը: Օրը մթնում ա, կունուր ախպերը շոր-շիրթ, յուրդընդժշակ պեն լոխ տակն ա տամ, մին ծըեռք էլ յոր օնում, մաշին պըտատվում, քոն ինում: Մըեծ ախպերն էլ վըերբան ղալանք-պըդատանք ա անում, վըեր մին ծըեռք մերան տա, տամ չի:

Հենց վըեր լուսանում ա, տա եր ա կենում, տեսնում մըեծ ախպերը մըեռած: Կըզնըզվում ա, թա՝ հինչ ըս կըռքընետ պեց ըրալ, ինձիրած ծիծաղում: Կոխկեն թըխում ա, թա՝ եր կաց: Տեսնում ա, վըեր տեղան տունքուր չի կյամ, նոր կլխու վա ինգում, վըեր մըեռած ա: Էտ փախած դըլըզներեն ծիյանցան մինը փըռնում ա, քյանդիրը յոր օնում, ախպորը ծիյին յիրած նստըցնում, կըպկըպոտում, հունցը-վըեր մին սաղ մարթ: Ախպորը հըվաքած վըեսկեղանը, փողը, տես-տենը լոխ ուրան հըվըքածեն նըհետ դըլըզներեն թողած ծիյանցը պիռնոտում ա, ինքյն էլ ախպորը ծիյին շիլական փըռնում, պիռնոտած ծիյանքը քշում առաջ:

Խիլա տեղ վըեր քյինամ ա, ծիյանքը սուփըծանում ըն, լոխ նի յա անում հըղըցեն կոխկե զուրուղը, մին քոլու քըմակե կյողը կենում: Էտ դուրուղեն տարերը հըորցանա եշում ըն, տեմբում մին մարթ ծիյին յիրա Շնըստածք, մին սանքուն ծիյանք ողուրուղն ըրածք, ըրըծցնում ա: Հըորցանա ծեն ըն տամ էտ մարթին, հայ-հու անում, ուզունց տամ, թա էտ ծիյանքը խե՞ յըս նի ըրալ, դուրզումեն

փուլքնում: Էտ ծիյին յիրա մարթն էլ վրեշ սնա ա անում, վրեշ
 էլ ծիյանքն ա տնւա անում: Ամմեն մինը մին մըհծ մըհակ, մին
 փայա ծըռքըներեն կյամ ըն տըրան թխում, որոպանում: Էս
 կումոր ախապերն էլ քոլեն քըմական տնւա ա կյամ, սնասը քըցնիմ
 էն գոնզերը, թա՝ վա՛ա՛յ, ե՛կերյ հըսերյ, ախապորըս ըսպընեցին:
 Տհանը յիրա յըն տեսնում, տըրա խաթիրը քըթննում, մին քանի
 ծիյապեռնը վրեսկի ել սըհանցա յա լոր օնում, պիռնոտած ծի-
 յանքը քշնիմ բիդի հիքանց տոն: Հենց վրեր մարը տնւա ա կյամ
 տղորանցն առաջը, մըհծ տըղեն մըեռած տեսնում, ծուլներեն վրեր
 թըկելավ ըսկըսում ա լաց ինիլը, կումոր տղան էլ թա՛ ա՛յա, ա՛յա,
 էսքան վրեսկին, էսքան փողը, ապրանքը լոխ ես ըմ պերալ, ինքյն
 էլ ինձ քյոմմագի ընելիի տեղակ կըռքընին ա պեց ըրալ, տըրս
 մեհենգի խելունքը ես ը՛մ, թա ինքյը:

